ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երևան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ. փոստ՝ meo@ypc.am

Դիտորդ մարմնի կազմը

Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ռուբեն ԲԱԲԱՅԱՆ
Լևոն ԲԱՐՍԵՂՅԱՆ
Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ
Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Վիգեն ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

«ՀՌՀ-ն ընդդեմ Հայկական 2-րդ հեռուստաալիքի» գործով

ՓԱՍՏԵՐ

1. Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը 2023 թվականի հուլիսի 6-ին ստացել է ՀՌՀ նամակը՝ հունիսի 25-ին «Հայկական երկրորդ հեռուստաալիք» տեսալսողական ծրագրի «Հայելի ակումբ» հաղորդման ընթացքում էթիկական նորմերի հնարավոր խախտումների վերաբերյալ դիրքորոշում հայտնելու խնդրանքով:

2. ՀՌՀ-ն խնդրահարույց է համարում այն փաստը, որ Հ2-ը հաղորդման հյուր Էդգար Ղազարյանին հնարավորություն է տվել իր եթերում հնչեցնել ծայրահեղ կոշտ արտահայտություններ, որոնք մեջբերելը Դիտորդ մարմինը նպատակահարմար չի գտնում:

3. Դիտորդ մարմինը 2023 թ. հուլիսի 7-ին էլ.նամակով դիմել է Հ2-ին՝ տեղեկացնելով նոր բողոքի մասին:

ԽՆԴՐԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

1. ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը 2023-ի ապրիլի 17-ին ընդունել էր Պարզաբանում՝ Հ2-ի եթերում բազմաթիվ և կրկնվող նույնատիպ խախտումների առնչությամբ, սակայն Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն ակնկալել է նաև այս բողոքի քննություն:

2. 2022 թ. հոկտեմբերից 2023 թ. օգոստոս կայացած մի քանի նիստերում ԴՄ-ն անդրադարձել է «Հայկական 2-րդ հեռուստաալիքի» վերաբերյալ ՀՌՀ դիմումներին, որոնք հասցեագրվել են մեծ մասամբ «Հայելի ակումբի» մամուլի ասուլիսների լուսաբանմանը: ԴՄ նիստերում և Ինքնակարգավորման նախաձեռնության ընդհանուր ժողովի (Հերմոն, հունիսի 23-25, 2023) քննարկումներում ի հայտ են եկել էական հակասություններ ինքնակարգավորման մարմնի և լրատվամիջոցի ներկայացուցիչների միջև՝ ԶԼՄ-ների էթիկայի կանոնագրի մեկնաբանման և ԴՄ գործունեության վերաբերյալ: Հ2-ի դեմ նախորդ բողոքների վերաբերյալ կայացված եզրակացությունները որևէ ազդեցություն չեն ունեցել հեռուստաալիքի խմբագրական

քաղաքականության վրա։

3. ՀՌՀ-ն պարբերաբար դիմում է Դիտորդ մարմնին՝ Հ2-ի քաղաքական բնույթի հեռարձակումներում տեղ գտած՝ լրագրողական կամ մեջբերվող գռեհկաբանությունը, ատելության և բռնության խոսքի դրսևորումները քննության առնելու առաջարկով։

4. Դիտորդ մարմինն իր հերթին պարբերաբար շեշտում է, որ նման բովանդակության տարածումը հարիր չէ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցին և հակասում է լրագրողական որակյալ աշխատանքի սկզբունքներին։

5. Հ2-ը պարբերաբար հայտարարում է, որ իրենց խմբագրության պատկերացմամբ՝ դա իրենց խոսքի ազատության դրսևորումն է։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Հասարակական-քաղաքական գործիչը հանրային սուր պոլեմիկայի համատեքստում կարող է արտահայտվել կոշտ ու ոչ հանդուրժողական բառապաշարով, նույնիսկ որոշակի սադրանք պարունակող ուղերձներ հնչեցնել, եթե չի գործածում ատելության, բռնության խոսք, ակնհայտ խտրականության դրսևորումներ։ Այդ առումով, հյուրընկալվելով «Հայելի» ակումբում, Էդգար Ղազարյանն ընդհուպ մոտեցել է թույլատրելի քաղաքական բանավեճի սահմանին, սակայն չի անցել այն։ Հետևաբար, նրա խոսքը փոխանցելով, հեռուստաալիքը չի խախտել Կանոնագրի որևէ դրույթ։

2. Միևնույն ժամանակ, մամուլի ասուլիս վարողը, որի հիմնական գործառույթը հյուրին արտահայտվելու հնարավորություն ընձեռելն է և նրա խոսքը լրագրողների միջոցով հանրությանը հասցնելը, հենց ինքն է նախահարձակ լինելում և, հյուրի խոսքին միջամտելով ու անցնելով թույլատրելիի սահմանը, փորձում է առավել թեժ բնույթ հաղորդել մամուլի ասուլիսին, թելադրել դրա տոնայնությունը։ Հյուրի տեսակետը, գնահատականները ներկայացնելը որպես հաղորդման նպատակ դիտարկելու դեպքում միջոցառումը հեռարձակող լրատվամիջոցը պետք է խուսափեր վարողի հայհոյախառն և վիրավորանք պարունակող խոսքը եթերով տարածելուց և պետք է տեսագրված նյութը համապատասխան մոնտաժի ենթարկեր։ Չհետևելով այս հարցում Դիտորդ մարմնի բազմաթիվ հորդորներին, Հ2-ը հերթական անգամ խախտել է Կանոնագրի 5.2. դրույթը, որը սահմանում է. *«Որևէ ձևով չքարոզել ազգային, կրոնական թշնամանք և անհանդուրժողականություն, քաղաքական, սոցիալական, սեռական և լեզվական հայտանիշներով խտրականություն, բացառել ատելության խոսքը»։*

3. Հետևություններ չանելով Դիտորդ մարմնի նախորդ եզրակացություններից, Հ2-ը շարունակում է խախտել իր իսկ ստորագրած Կանոնագրի 6.3. կետը, որը սահմանում է. *«Ընդունել սեփական սխալները և պատրաստակամ լինել՝ ուղղելու դրանք»*:

Հիշեցում.

Կանոնագիրը *ստորագրած լրատվամիջոցների ներկայացուցիչներն ընդունում են իրենց իսկ ընտրած Դիտորդ մարմնի իրավասությունը՝ քննելու իրենց գործողությունների ու հրապարակումների համապատասխանությունը սույն Կանոնագրի դրույթներին, և պատրաստակամություն են հայտնում Դիտորդ մարմնի եզրակացության՝ խախտմանը վերաբերող հատվածներն առանց մեկնաբանությունների հրապարակել իրենց լրատվամիջոցներում և այդ մասին տեղեկացնել ԴՄ-ին՝ կցելով հրապարակման հղումը:*

Ընդունվել է 2023 թ. օգոստոսի 29-ին,
ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի հետևյալ կազմով

Կարինե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
«ԳԱԼԱ» ՀԸ գործադիր տնօրեն
Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Վանաձորի «Լոռի» ՀԸ գործադիր տնօրեն
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
«Նյումեգ» հրատարակչության գլխավոր խմբագիր
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Երևանի մամուլի ակումբի պատվավոր նախագահ
Դավիթ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
«Մեդիամաքս» լրատվական գործակալության գլխավոր խմբագիր
Ռուբեն ԲԱԲԱՅԱՆ
ռեժիսոր, Երևանի թատրոնի և կինոյի ինստիտուտի պրոֆեսոր
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Հանրային հեռարձակողի խորհրդի նախագահ
Վիգեն ՍԱՐԳՍՅԱՆ
Երևանի մամուլի ակումբի Մասնագիտական էթիկայի հանձնաժողովի նախագահ

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձևավորել են ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցները, որոնք այս պահին 76-ն են: ԴՄ-ն ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2023 թվականի հունիսի 25-ի ընդհանուր ժողովում: